ընդէ՞ր զձեզ հարկեցին ի կոչել զմեզ. զի որ սիրէ՝ փութով ընթանայ, և արագ ժամանէ։ Ասեմք, թէ ոչ հաւատացաք զլսելդ, և կամ զի գիտելով նչմարանօք իմիք, թէ սրբութիւնդ վասն խոյս տալոյ յզբաղմանց այդր խուսեցեր, որպէս զի իբրև զոդկոյզ ի հունձս և որպէս զցորեան ի չտեմարանս հաւաքելի զքեզ առնէիր, զի յառ դիպիլ կոչմանդ հարկին, անդանդաղ առ մեզ խոնարհէիր ի ստգտանաց սրտիդ դգդեցեալ, և ասել, թէ բաւական է, արդ յարեայց, արդ բարձրացայց, արդ խոնարհական զիջմամբ փառաւորեցայց։ Գիտէաք և մեք, եթէ ի տարադէպ պահու զքեզ կոչէաք, (մինչդեռ սակաւ ինչ լծոյ զբաղմանց կարէիրն ենթարկել) ասելոց էիր, թէ ես վասն այնորիկ զփախուստ առի, զի յուսալին ձեր լծենթարկութեան եղանակն յայլ ինն փոխեսցի, որպէս զի ի զալս իմում յակամայ՝ կամաւ յինէն զձեռս քարշէիք, և զիս ազատ ի զբաղմանց առնէիք. և զայս ի Գերապայծառութեանդ գրոյն ևս ծանեաք, զի յերից աթոռոց ի գործն զքեզ ոչ հարկել մեզ գրեալ էիր, ոչ ի հոգևորս, և ոչ ի մարմնաւորս։ Առ որ ասեմք, թէ ո՞վ Գերապայծառ, եթէ յայնժամ մինչ ունէիրն զկարողութիւն, ի հարկելն մեր զսրբութիւնդ ի յասացելոցդ ի մինն, յանձն ոչ առեր. և մեք ոչ ճշդեցաք զկամս քո, և մինչ այժմ հաւաստեաւ ծանեաք զփախուստ քո ի զբաղմանց, և զժամանակդ վասն այն անցուցեալ այդր, զի ի լծոյ ազատ մնայիր, ո՞րպէս կարեմք յայսմհետէ ստիպել զհայրդ ծերունի, բառնալ զբեռինս որդեկացդ մատղաշագունից, թէ և Հռօմայ Գահին վերադիտողք յայդմ հասակի ընտրին ի բեռնաբարձութիւն, որպէս զի իբրև զպարզեալ գինիս ի մրրոյ աշխարհի և ըղձից նորա մեռեալք եղիցին։ Բայց մեք ուխտեմք ի ձեռն Գրոյս, զի ի հետս չաւղաց կամաց քոց ընթացցուք, և մի բնաւ ի սոսկալեացդ միայն ի գործ զբաղական զքեզ ստիպեսցուք։ Այլ կամք սրբութեանդ եղիցի քանոն և նախատիպ, հայելի և ցուցակ մերոցս կամաց, որպէս զի առ այն նկատելով ուղղապէս գծաւորիցիմք, և օրինակիցիմք և իբր ի հայելւոջ նչմարելով նունատիպ երևիցիմք։ Քանզի զի՞նչ վարձք իցեն սրբութեանդ, եթէ բարիքն քո ի հարկէ և ոչ ի կամաց լինիցին. և մի՞թէ պակաս փառք իցեն մեզ զքոյապիսի սրբազան Ներունիդ ունել աղօթող վասն մեր ի սուրբ տեղիսն. որպէս զի բազկացդ տարածմամբ իբրև զոմն այլ երկրորդ Մովսէս զամաղէկացի դևսն ընկճեսցես որք ընդ մեզ մենամարտին։ Այո՝ ով Գերապայծառ Հայր մեր, ոչ ստիպեմք, ոչ դրդեմք, և ոչ հարկեմք զսրբութիւնդ ի գործ ինչ արտաքոյ կամաց քոց, միայն թէ լի՛ց զխնդութիւնս մեր, բարձ զկարօտութիւնս ի մէնջ. և մեք խնդրեմք ի Յիսուսէ Քրիստոսէ, զի զբաղձանս սրտիդ, որ առ բարին փոյթ ընդ փոյթ լցուսցէ, որպէս զի բազկատարած մշտանուէր աղօթիւք ի սուրբ Գողգոթայ ըստ Տեառն նմանութեան, վասն մեր և վասն քոյ աղօթս և պաղատանս առնիցես, և լսելի լինիցիս առ լաւութեան ըստ ասից զարմանալւոյն Պօղոսի։ Ուստի ըստ այսմ սարասի, և ըստ մտացդ դիտման զխոնարհիլն մեր տեղեկացեալ, անկասկածօրէն հրամայեա՛, և եկ, զի ոչ բռնադատեմք զկամս քո, որ զհոգեկանն ևեթ ունիս ի մտի, և ազգին մերոյ զքոյապիսի յոգնաթիւ աղօթողս ունել զկարևորութիւն քաջ գիտասցես. և իբրև զՆերունին Բերզէլի՝ արժանի սեղանակցելոյ Դաւթին ճչմարտի զքեզ ծանիցես։ Ի վախճանի դիտմանս կնքեմք զբանս ըստ խնդրոյ քոյ, և աղաչեմք, զի աւուրբ միով յառաջ զկարօտս մեր լցուսցես շնորհալի գալըստեամբդ. և սրբութիւնդ ևս զկարօտ քո մեր տեսութեամբ առցես. և մեզ քաւ լիցի թէ ի խորշելեացդ գործոց վերայ զքեզ բռնադատիցեմք. Վկայ լիցի Աստուած ի միջի մերում։ Իսկ որ սակս արևելից կողմանն ունիս զկասկած, Աստուծով անհոգ լեր. զի խաղաղութիւնն ստոյգ է. և թէ ի կողմանէ սրբոյ աթոռոյն Էջմիածնի կամիս տեղեկանալ, դուռն բաց. հոգևոր պաշտամամբ հաստատ. միայն թէ ի մարմնաւորաց մերկ. և զայլսն ի գալստեանդ կարես լիապէս իմանալ։ Ողջ լեր ի պարծանս պաշտօնակցի քոյ Յակոբայ Նուաստ Պատրիարգի Կոստանդնուպոլսոյ, (որ ձեռամբս գրեցի). և այլոց յստորև կընքողաց գրոյս։

[Յակոբ Պատրիարք Կ. Պոլսոյ]

Զօպան օղլու Յարութիւն — Մհի. Սեղբոս — Մհի. Մարտիրոս

Խօճայ Միքայէլ — Մհի. Պաղտասար

Յամի Տեառն 1747 մայիսի 15

[Կ. Պոլիս]